ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.10.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 9 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը, Ն.Վարդանյանը,Ն.Բաբայանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանչյանը, համայնքի գլխավոր խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 91 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Չարենցավան համայնքի 2023 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

7. Չարենցավան համայնքի ավագանու անդամ Արթուր Գևորգի Փանոսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, ***առաջարկում եմ***, ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Զարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ ***առաջարկում եմ.*** Զարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել ներկայացվող փոփոխությունները և լրացումները;

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Լսեցին.

3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Զարենցավան համայնքի Զարենցավան քաղաքի 7-րդ թաղ. 2-րդ շենքի 19 բն.բնակիչ Աննա Գուրգենի Բաղդասարյան 2022 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 3859-16, , Զարենցավան քաղաքի 1-ին թաղ. 11 շենքի 13 բն. բնակիչ Նինա Գրիգորիյի Պիսլարի 2022 թվականի օգոստոսի 30-ի թիվ 3751-16, Զարենցավան քաղաքի 4-րդ թաղ. 25 շենքի 29/30 բն.բնակիչ Լենա Միշայի Օզմանյանի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 5208-16, Արզականի գյուղի Թեղենիքի խճուղի 35 տան բնակիչ Վարդան Հայկարամի Հովհաննիսյանի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 5209-16,

Ալափարս գյուղի 9 փ.11-տան բնակիչ Ռուբիկ Եդայի Բաբախանյանի 2022 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 5012-16 և Արզականի գյուղի Շինարարների փող. 1-ին նրբ. 11 տան բնակիչ Հեղուշ Բաբկենի Արզունյանի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 5197-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ***.

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Աննա Գուրգենի Բաղդասարյանին,***
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Նինա Գրիգորիյի Պիսլարիին,***
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Լենա Միշայի Օզմանյանին,***
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Վարդան Հայկարամի Հովհաննիսյանին,***
5. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Ռուբիկ Եդայի Բաբախանյանին,***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 91 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների. ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 91 որոշմամբ հաստատված հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:/կցվում է/

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. ***Չարենցավան համայնքի 2023 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:***

/Զեկ.Վ.Չիլինգարյան/

Հաշվի առնելով, որ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Չարենցավան համայնքի կողմից ներկայացված «Չարենցավան համայնքի 2023 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից, ղեկավարվելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի գ) կետի 4-րդ պարբերության դրույթներով՝***առաջարկում եմ.*** Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի կողմից 2023 թվականին իրականացվելիք բնապահպանական ծրագրին՝ համաձայն հավելված (NN 1.2): /կցվում են/

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ.Հ.Ղազանչյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , 77-րդ հոդվածով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման՝ ***առաջարկում եմ***.. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումի:

Հ/Հ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Եղիսա Դարբինյան	5-15-18	14 500 000	Սեփականություն	Անհատույց
2.	Շուշանիկ Մանվելյան	6-22-27	16 600 000	Սեփականություն	Անհատույց
3.	Մարինե Հարությունյան	3-1-22/23	3 500 000	Սեփականություն	Անհատույց

Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. Չարենցավան համայնքի ավագանու անդամ Արթուր Գևորգի Փանոսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

/Զեկ.Ս.Մուրադյան/

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0

Բաբայան Վալերի

Գասպարյան Մելիք

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Եփրեմյան Տարոն

Խլղաթյան Արսեն

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ